ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ. Շ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ս. Ն. ՍԻՄՈՆՅԱՆ, Աշխատուժի վերարտադրության ռեգիոնալ առանձնահատկությունները, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1985, 238 էջ։

Աշխատուժի վերարտադրությունը հասարակական վերարտադրության ամբողջ համակարգի բաղկացուցիչ մասերից է։ Ներկայումս այն ժողովրդատնտեսական առավել կարևոր նշանակություն է ձեռք բերել, քանի որ լրացուցիչ աշխատուժ ընդգրկելու հաշվին էկոնոմիկայի առի հնարավորությունները խիստ սահմանափակվել են։ Սովետական տնտեսագիտական գրականության մեջ աշխատուժի վերարտադրության պրոբլեմին նվիրված են զգալի թվով աշխատություններ։ Սակայն ռեգիոնալ մի շարք պրոբլեմներ, մասնավորապես գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում ռեգիոնալ աշխատուժի վերարտադրության պրոբլեմները դեռ բավարար լուծում չեն ստացել։ Այս առումով գրախոսվող աշխատությունը միանգամայն հրատապ է և, տեսական որոշակի հետաքրքրություն ներկայացնելուց բացի, ունի կարևոր գործնական նշանակություն։ Սոցիալիզմի օրոք աշխատուժի սոցիալ-տնտեսական բովանդակությունը հեղինակները բնորոշել են իբրև «շահագործումից ազատ միավորված արտադրողի ֆիզիկական և հոգևոր ընդունակությունների ամբողջություն, որն արտադրության միջոցների հանրային սեփականության հիման վրա նա ինքնագիտակցաբար գործադրում է հասարակությանն անհրաժեշտ նյութական և հոգևոր բարիքներ ստեղծելու և հասարակական արդյունքն ավելացնելու համար» (էջ 18)։

Ելնելով մարքս-լենինյան տնտեսագիտական տեսությունից, աշխատության հեղինակները հիմնավորել են աշխատուժի ոչ ապրանքային բնույթը և ցույց տվել, որ անհատական աշխատուժը սոցիալիզմի օրոք չի կարող սեփականության հարաբերությունների օբյեկտ լինել։ Նրանք գտնում են, որ առանձին աշխատողի և հասարակության միջև աշխատուժի յուրացման և տնօրինման հարաբերություններ չեն ձևավորվում, դրա փոխարեն առաջանում են հարաբերություններ աշխատուժի կազմավորման, բաշխման և օգտագործման վերաբերյալ, երբ անհատի և հասարակության շահերը համընկնում են։ Հեղինակներն այնուհետև հիմնավորում են, որ որակապես և քանակապես որոշված աշխատուժը աշխատանքային ռեսուրս է և արտահայտում է աշխատելու ընդունակության վերարտադրության կապակցությամբ ծագող հարաբերությունների ամբողջությունը։ Նրանց կարծիքով «աշխատուժի և աշխատանքային ռեսուրսների տարբերությունն այն է, որ առաջինի որակական և քանակական բնութագիրը վերացարկված է, իսկ երկրորդինը՝ կոնկրետ։ Աշխատանքային ռեսուրսներն աշխատուժի (բովանդակության) արտահայտման կոնկրետ ձև են» (էջ 39)։

Գրքում, իրավացիորեն ժխտելով աշխատուժի փոխանակության փուլի անհրաժեշտությունը և նրա վերարտադրությունը դիտարկելով եռափուլ տեսության հայեցակետից, ցույց է տրվում, որ սոցիալիզմի օրոք այն հասարակական վերարտադրության դիալեկտիկական բաղկացուցիչ մասն է, պլանաչափ մի պրոցես, որը ներառում է աշխատանքի ընդունակությունների վերականգնումը, անհատի զարգացման համար պայմանների ստեղծումը, աշխատանքի բարդ տեսակներ կատարելու համար աշխատուժի պատրաստումը, նրա բաշխումն ըստ գործունեության տեսակների և տնտեսական շրջանների, ինչպես նաև գործունեության փոխանակությունը և աշխատուժի օգտագործումը հասարակական արտադրության պրոցեսում։

Տեսական և մեթոդոլոգիական որոշակի հետաքրքրություն ունի հեղինակների դիրքորոշումն աշխատուժի վերարտադրության փուլերի առաջնայնության մասին։ Քննադատելով տնտեսագիտական գրականության մեջ հանդիպող այն կարծիքները, որոնք աշխատուժի վերարտադրության մեջ որոշիչ նշանակություն են տալիս նրա որևէ փուլին, հեղինակները միանգամայն իրավացիորեն նշում են, որ արտադրության փուլի՝ մյուս փուլերի նկատմամբ առաջնայնության մարքսյան ըմբռնումը կիրառվում է միայն ամբողջությամբ վերցրած հասարակական վերարտադրության համար, որն ընդգրկում է հասարակական արդյունքի, արտադրական հարաբերությունների և աշխատուժի (իր համապատասխան բաղկացուցիչ մասերով) վերարտադրությունը։ Աբ-

գում է այն հետևությունը, որ «ոչ թե աշխատուժի արտադրությունը (կազմավորումը), սպառումը (օգտագործումը) կամ բաշխումն են հանդես գալիս որպես առաջնային աշխատուժի վերարտադրության մյուս փուլերի նկատմամբ, այլ նյութական բարիքների արտադրությունը՝ ինչպես ամբողջությամբ վերցրած հասարակական վերարտադրության մեջ, այնպես էլ աշխատուժի և նրա յուրաքանչյուր փուլի նկատմամբ» (էջ 55)։

Աշխատության մեջ ցույց է տրվում, որ աշխատուժի վերարտադրությունն իրագործվում է տնտեսական մի շարք օրենքների և առաջին հերթին աշխատուժի ծախսերի փոխհատուցման օրենքի ազդեցության պայմաններում, որը սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի գործողության ազդեցությամբ կանխորոշում է նյութական և հոգևոր բարիքների ու ծառայությունների այն չանակը, որ անհրաժեշտ է աշխատուժի վերարտադրության և անհատի համակողմանի զարգացման նյութական հիմքի ստեղծման համար։ Քննադատվում է այն հետազոտողների դիրքորոշումը, որոնք, սոցիալիզմի օրոք աշխատուժն ապրանք չհամարելով, միաժամանակ գտնում են, որ այն արժեք ունի։ Գրքում իրավացիորեն ընդգծվում է, որ արժեքն արտահայտում է ապրանքային հասարակական հարաբերություններ, իսկ աշխատուժը սոցիալիզմի ժամանակ նման հարաբերություններ չի արտահայտում։ Սակայն դրանից ամենևին էլ չի բխեցվում, որ պետք է ժխտել աշխատուժի ծախսերի փոխհատուցման արժեքային ձևը։ Հեղինակների կարծիքով արդյունքի ապրանքային ձևի պահպանումը սոցիալիզմի ժամանակ արժեքային արտահայտություն է տալիս նաև կենսամիջոցների ամբողջությանը, որը կազմում է աշխատուժի վերարտադրության նյութական հիմքը։

Աշխատության առանցքային մասը աշխատուժի վերարտադրության ռեգիոնալ առանձնահատկությունների ուսումնասիրությունն է։ Բնութագրելով «ռեգիոն» և «ռեգիոնի հավաքական աշխատուժ» հասկացությունների բովանդակությունը, հեղինակները ցույց են տալիս ռեգիոնի տեղն ու դերը վերարտադրական ամբողջ պրոցեսում, բացահայտում Հայկական ՍՍՀ և նրա առանձին տնտեսական շրջանների աշխատուժի կազմավորման և բաշխման առանձնահատկությունները հեռանկարում։ Նրանք իրավացիորեն նշում են, որ անհատական աշխատուժի վերարտադրությունը չի կարող սահմանափակվել ձեռնարկության շրջանակներով։ Ավելի մեծ չափով այն որոշվում է ռեգիոնալ պայմաններով, մասնավորապես աշխատանքի հասարակական բաժանման մեջ ռեգիոնի գրաված տեղով, ծառայությունների դիմաց գների և տարիֆների մակարդակով, անձնական օժանդակ տնտեսության վարման պայմաններով և այլն։

Դրվատանքի է արժանի այն, որ հեղինակներն աշխատուժի կազմավորման, բաշխման և օգտագործման պրոբլեմները հետազոտում են ոչ միայն Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանների, այլև ժողովրդական տնտեսության ճյուղերի կտրվածքով։ Գրքում տրվում են աշխատանքային ռեսուրսների բաշխման առանձնահատկությունները նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտի, ինչպես նաև այդ ոլորտների տարբեր ճյուղերի միջև, զբաղվածության շարժը և կառուցվածքը նյութական արտադրության մեջ։ Բացահայտվում է, որ վերջին քսանամյակում աշխատանքային ռեսուրսներն առավել արագ աճել են հանրապետության արդյունաբերության մեջ, մասնավորապես նրա այն ճյուղերում, որոնք ապահովում են գիտատեխնիկական ասպարեզի թափը։ Աշխատանքային ռեսուրսների աճի տեմպերով արդյունաբերությանը հաջորդել են առևտուրը, հասարակական սնունդը, նյութատեխնիկական մատակարարումը և իրացումը, մթերումները, որը բացատրվում է այդ ճյուղերում աշխատանքի կիրառման առանձնահատկություններով, բնակչության և նրա դրամական եկամուտների աճով, տնտեսական կապերի զարգացումով և խորացումով։ Հիմնավորվում է, որ այդ գործոնների ազդեցությունը պահպանվելու և նույնիսկ ուժեղանալու է, ուստի ենթադրվում է, որ 1990-ական թվականներին նշված ճյուղերում զբաղվածությունն աճելու է առավել բարձր տեմպերով։ Հետազոտվում է աշխատանքային ռեսուրսների բաշխման համամասնությունների փոփոխությունը տնտեսության հանրայնացված և ոչ հանրայնացված սեկտորների միջև։ Մասնավորապես ցույց է տրվում, որ Հայկական ՍՍՀ-ը միութենական հանրապետությունների մեջ առանձնանում է տնտեսության ոչ հանրայնացված սեկտորում զբաղվածության բարձր մակարդակով, որի վրա ազդող գործոններն առավել հստակ գործում են հանրապետության գյուղական վայրերում, ուր զբաղվածության մակարդակը տնային և անձնական օժանդակ տնտեսության մեջ զգալիորեն բարձր է քաղաքներից։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում աշխատուժի վերարտադրության փուլերի վրա միգրացիայի ազդեցության հետազոտությունը։ Աշխատուժի միգրացիան սահմանելով որպես նրա տարածական վերաբաշխում, որը հաշվեկշռում է արտադրողական ուժերի իրային

տարրերի տարածքային բաշխումն արտադրության սուբյեկտիվ գործոնի հետ» (էջ 113) և նը-ջելով միգրացիոն հոսքերի հիմնական ուղղվելերն ու ձևերը, հեղինակները ցույց են տալիս, որ վերջին տարիներին միգրացիոն հոսքերը դեպի Հայկական ՍՍՀ դրսևորում են թուլանալու բացահայտ միտում։

Աշխատության մեջ բացահայտվում է աշխատուժի վերարտադրության վրա գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունը, որի հետևանքով փոխվում են աշխատանքի բնույթն ու բովանդակությունը, ի հայտ են գալիս սոցիալ-տնտեսական նոր պրոբլեմներ։ Հեղինակները եզրակացրել են, որ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ճյուղերում և տնտեսական շրջաններում աշխատողների ընդհանուր թվաքանակի մեջ ավելանում է բարձր որակավորում ունեցող մասնագետների տեսակարար կշիռը, ընդլայնվում նրանց մասնագիտական պրոֆիլը, ուժեղանում աշխատանքի փոփոխումը, աճում ստեղծագործական աշխատանքի տարրերի բաժինը։ Այս ամենը թելադրում է, որ մեր հանրապետությունում առաջիկայում նույնպես մեծ ուշադրություն հատկացվի աշխատատար և բարձր որակավորում պահանջող արտադրությունների ստեղծմանը։ Այնուհետև գրքում նշվում են որակյալ բանվորների ու ինժեներատեխնիկական կադրերի պատրաստման և բաշխման բարելավման հիմնական ուղիները։ Ուշադրության են արժանի այդ կապակցությամբ արված կոնկրետ հետևություններն ու առաջարկությունները։

Աշխատության եզրափակիչ մասում հետազոտվում են աշխատուժի օգտագործման պրոբլեմները և կոնկրետ առաջարկություններ են արվում դրա արդյունավետության բարձրացման ուղղությամբ։ Նշվում է, որ գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում աշխատանքային ռեսուրսների թվի աճի հաշվին նյութական բարիքների արտադրության հնարավորությունները կտրուկ նվազում են, որովհետև աստիճանաբար նվազում են բնակչության բնական աճի տեմպերը։ Մյուս կողմից, անցումը ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթության, աշխատողների որակական մակարդակի նկատմամբ պահանջների բարձրացումը աշխատունակ տարիքի ավելի շատ մարդկանց է ստիպում ընդգրկել ուսման մեջ, իսկ դրա հետևանքով նյութական արտադրության մեջ ընդգրկվելու հնարավորությունների սահմանափակման հետ միասին կրճատվում է կոնկրետ աշխատանքային գործունեության ժամանակը, այնուհետև մեծանում է ոչ արտադրական ոլորտում զբաղվածների թիվը և ավելի ու ավելի են սահմանափակվում տնտեսության ոչ հանրային սեկտորի հաշվին հանրային արտադրության մեջ աշխատանքային ռեսուրսների թիվն ավելացնելու հնարավորությունները։ Բնականաբար, տնտեսության զարգացման ներկա ժամանակաշրջանում աշխատանքային ռեսուրսների էքստենսիվ օգտագործման հնարավորությունների սահմանափակումը թելադրում է ավելի լրիվ օգտագործել հասարակության աշխատանքային ժամանակի ֆոնդն ավելացնող մյուս էքստենսիվ գործոնները։ Այդուհանդերձ աշխատուժի էքստենսիվ օգտագործման հնարավորությունները վաղ թե ուշ սպառվելու են, և հեղինակները հիմնավորում են սոցիալիզմի զարգացման ներկա փուլում աշխատուժի օգտագործման առավելապես ինտենսիվ ձևերին անցնելու անհրաժեշտությունը։ Աշխատուժի օգտագործման բոլոր ինտենսիվ ձևերը վերջին հաշվով հանգեցվում են աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ Այդ կապակցությամբ աշխատության մեջ հանգամանորեն քննարկվում են աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատուժի արդյունավետ օգտագործման մակարդակն ու գործոնները ինչպես Հայկական ՍՍՀ տնտեսական շրջաններում, այնպես էլ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում։

Աշխատության մեջ բացահայտվում են Հայկական ՍՍՀ աշխատանքային ռեսուրսների օգտագործումը բնութագրող հետևյալ օրինաչափությունները. ա) հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աշխատանքային ռեսուրսների օգտագործման մակարդակը մոտենում է միջին միութենականին, բ) նկատվում է այդ ցուցանիշի գծով նյութական արտադրության տարբեր ճյուղերի և հանրապետության տարբեր տնտեսական շրջանների միջև եղած էական տարբերությունների համահարթում։ Մասնավորապես աշխատանքային ռեսուրսների օգտագործման մակարդակը Հայկական ՍՍՀ նյութական արտադրության տարբեր ճյուղերում աստիճանաբար մոտենում է արդյունաբերության համապատասխան ցուցանիշին, իսկ առանձին տնտեսական շրջաններում՝ կենտրոնական (Արարատյան) տնտեսական շրջանի համապատասխան ցուցանիշին։

Աշխատության մեջ տեղ են գտել մի շարք թերություններ։ Մասնավորապես տալով աշխատանքային ռեսուրսների բաշխման կառուցվածքային փոփոխությունները ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում և հանրապետության տնտեսական շրջաններում, հեղինակները չեն դնում և լուծում զբաղվածությունն օպտիմալացնելու խնդիրը։ Դրան խնդիր կարելի էր դնել նաև աշխատուժի միգրացիան կարգավորելու, օպտիմալացնելու համար։ Աշխատության մեջ հանդի-

պում են նաև որոշ անհարկի կրկնություններ։ Սակայն նշված թերություններն ամենևին չեն նսեմացնում Հայկական ՍՍՀ և նրա տնտեսական շրջանների աշխատանքային ռեսուրսների վերարտադրության առանձնահատկությունների խորը և բազմակողմանի հետազոտությանը նվիրված գրախոսվող մենագրության արժեքը։ Այն գիտատեսական որոշակի հետաքրքրությունից բացի, ունի գործնական նշանակություն և կարող է օգտակար լինել ոչ միայն քաղաքատնտեսության, ժողովրդագրության և ռեգիոնալ էկոնոմիկայի պրոբլեմներով զբաղվող մասնագետների, այլև ընթերցողների լայն շրջանների համար։

ՅՈՒՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր